ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/45

ք. Երևան «08» 08 2019թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <Թ.Ա.Հ.Գ ԳՐԻԳ> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծանախահաշվային փաստաթղթերի աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **6 290 000** (**վեց միլիոն երկու հարյուր իննսուն հազար**) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

...ականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը

...ակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 1.1 N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	ք. Երևան, Թոթովենցի 12/28
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստանյան Բանկ» ՓԲԸ 15 մ/6
Հ/Հ 900011028298	Հ/Հ՝ 16054008264300
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ՝ 00857439
Գլխավոր քարտուղար	Տնօրեն՝
_____ Վ. Օհանյան	_____ Լ. Գրիգորյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 08 » 08 2019 թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/45 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
1	71241200/501	Տես հավելված 1.1	դրամ	350 000	350 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
2	71241200/502	Տես հավելված 1.1	դրամ	390 000	390 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
3	71241200/503	Տես հավելված 1.1	դրամ	250 000	250 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
4	71241200/504	Տես հավելված 1.1	դրամ	220 000	220 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
5	71241200/505	Տես հավելված 1.1	դրամ	190 000	190 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
6	71241200/506	Տես հավելված 1.1	դրամ	70 000	70 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
7	71241200/507	Տես հավելված 1.1	դրամ	200 000	200 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
8	71241200/508	Տես հավելված 1.1	դրամ	260 000	260 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
9	71241200/509	Տես հավելված 1.1	դրամ	200 000	200 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
10	71241200/510	Տես հավելված 1.1	դրամ	230 000	230 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր

11	71241200/511	Տես հավելված 1.1	դրամ	210 000	210 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
12	71241200/512	Տես հավելված 1.1	դրամ	270 000	270 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
13	71241200/513	Տես հավելված 1.1	դրամ	310 000	310 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
14	71241200/514	Տես հավելված 1.1	դրամ	40 000	40 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
15	71241200/515	Տես հավելված 1.1	դրամ	210 000	210 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
16	71241200/516	Տես հավելված 1.1	դրամ	110 000	110 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
17	71241200/517	Տես հավելված 1.1	դրամ	190 000	190 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
18	71241200/518	Տես հավելված 1.1	դրամ	100 000	100 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
19	71241200/519	Տես հավելված 1.1	դրամ	250 000	250 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
20	71241200/520	Տես հավելված 1.1	դրամ	90 000	90 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
21	71241200/521	Տես հավելված 1.1	դրամ	70 000	70 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
22	71241200/522	Տես հավելված 1.1	դրամ	140 000	140 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
23	71241200/523	Տես հավելված 1.1	դրամ	140 000	140 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
24	71241200/524	Տես հավելված 1.1	դրամ	140 000	140 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր

25	71241200/525	Տես հավելված 1.1	դրամ	140 000	140 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
26	71241200/526	Տես հավելված 1.1	դրամ	220 000	220 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
27	71241200/527	Տես հավելված 1.1	դրամ	210 000	210 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
28	71241200/528	Տես հավելված 1.1	դրամ	250 000	250 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
29	71241200/529	Տես հավելված 1.1	դրամ	330 000	330 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
30	71241200/530	Տես հավելված 1.1	դրամ	100 000	100 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
31	71241200/531	Տես հավելված 1.1	դրամ	250 000	250 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր
32	71241200/532	Տես հավելված 1.1	դրամ	160 000	160 000	1	Տես հավելված 1.1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 45 օրացուցային օր

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

***** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀ 900011028298
ՀԿՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար

Վ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ
ք. Երևան, Թոթովենցի 12/28
«ՎՏԲ-Հայաստանյան Բանկ» ՓԲԸ 15 մ/հ
ՀՎՀ՝ 16054008264300
ՀԿՀՀ՝ 00857439
Տնօրեն՝

Լ.Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 08 » 08 2019 թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/45 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հ/Հ	Հասցե , անվանում
1	N1 ՀՓՋ, ք.Երևան, Իսակովի 9/1 - շենքի 976.45 քմ մակերեսով 1-ին և 2-րդ հարկերի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում
2	N3 ՀՓՋ,ք. Երևան, Գլինկայի 13 - շենքի 1063 քմ մակերեսով 1-ին և 2-րդ հարկերի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում
3	N4 ՀՓՋ,ք. Երևան, Շարուրի 22/1 - շենքի 550 քմ մակերեսով 1-ին և 2-րդ հարկերի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում
4	N5 ՀՓՋ,ք. Երևան, Ղափանցյան 7/3 - շենքի 582.1 քմ մակերեսով 1-ին և 2-րդ հարկերի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում
5	N6 ՀՓՋ,ք.Երևան, Արցախի 4նրբ. 5/7 - շենքի 450 քմ մակերեսով ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի մասնակի նորոգում
6	N13 ՀՓՋ,ք.Երևան,Ա. Միկոյան 109/12 - շենքի 772.1 քմ մակերեսով ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի մասնակի նորոգում
7	Վեդիի ՀՓՋ,ք.Վեդի,Արցախի փ.7 - շենքի 429.9 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
8	Մասիսի ՀՓՋ,ք.Մասիս,Բաղրամյան փ.26 - շենքի 545 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
9	Ապարանի ՀՓՋ,ք.Ապարան,Գայի փ.17 - շենքի 470 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
10	Արագածի ՀՓՋ,Արագածոտնի մարզ,գ.Ծախկահովիտ 1փ. 2տ. - շենքի 530 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
11	Աշտարակի ՀՓՋ,ք.Աշտարակ,Ղազար Փարպեցու փ.2 - շենքի 329.8 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
12	Արմավիրի ՀՓՋ,ք.Արմավիր,Չարենցի փ.10 - շենքի 559.4 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
	Էջմիածնի ՀՓՋ,ք.Քջմիածին,Աթարբեկյան փ.11 - շենքի 658.2 քմ մակերեսի

13	ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
14	Բաղրամյանի ՀՓՋ,Արմավիրի մարզ,գ.Մյասնիկյան,Իսակովի փ.19 - շենքի 82 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
15	Ճամբարակի ՀՓՋ,ք.Ճամբարակ,Տիգրան մեծի փ.1 - շենքի 478 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
16	Վարդենիսի ՀՓՋ,ք.Վարդենիս,Չարենցի փ.64 – 247,2 քմ մակերեսով շենքի ներքին հարդարման աշխատանքներ, տանիքի ամբողջական նորոգում, ջեռուցման համակարգի իրականացում
17	Վանաձորի N2 ՀՓՋ,ք.Վանաձոր,Վարդանանց փ.6գ – 413,3 քմ մակերեսով շենքի ներքին հարդարման աշխատանքներ, տանիքի ամբողջական նորոգում, ջեռուցման համակարգի իրականացում
18	Սպիտակի ՀՓՋ,ք.Սպիտակ,Մուրացանի փ.2 – 229,5 քմ մակերեսով շենքի ներքին հարդարման աշխատանքներ, տանիքի ամբողջական նորոգում, ջեռուցման համակարգի իրականացում
19	Թումանյանի ՀՓՋ,ք.Ալավերդի,Թումանյան փ. - 553.4 քմ մակերեսով շենքի ներքին հարդարման աշխատանքներ, տանիքի ամբողջական նորոգում, ջեռուցման համակարգի իրականացում
20	Հրազդանի ՀՓՋ,ք.Հրազդան,Ռ.Միքայելյան փ.13 - շենքի 214 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
21	Եղվարդի ՀՓՋ,ք.Եղվարդ,Սաֆարյան փ. 1-ին նրբ. - շենքի 164.5 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
22	Չարենցավանի ՀՓՋ,ք.Չարենցավան,Հոկտեմբերյան փ.2 - շենքի 403.6.8 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
23	Արթիկի ՀՓՋ,ք.Արթիկ,Շահումյան փ.5 - շենքի 364 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
24	Անիի ՀՓՋ,ք.Մարալիկ,Շահինյան փ.3 - շենքի 379.5 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
25	Գորիսի ՀՓՋ,ք.Գորիս,Բակունցի փ.1 - շենքի 235.3 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
26	Սիսիանի ՀՓՋ,ք.Սիսիան,Իսրայելյան փ.6 - շենքի 480.6 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
27	Ագարակի ՀՓՋ,ք.Ագարակ,Սայաթ-Նովա փ.26 - շենքի 438.9 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
	Քաջարանի ՀՓՋ,ք.Քաջարան,Լեռնագործների փ.22 - շենքի 534.65 քմ

28	մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
29	Ջերմուկի ՀՓՋ,ք.Ջերմուկ,Ձախափի փ.1բ. - շենքի 670.9 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
30	Վայքի ՀՓՋ,ք.Վայք,Մյասնիկյան փ.15 - շենքի 187.4 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
31	Տավուշի ՀՓՋ,ք.Բերդ,Թումանյան փ.1 - շենքի 505.2 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում
32	Նոյեմբերյանի ՀՓՋ,ք.Նոյեմբերյան,Կամոյի փ.1 - շենքի 333.9 քմ մակերեսի ներքին հարդարման աշխատանքներ, դուռ-լուսամուտների փոխարինում, ջեռուցման համակարգի իրականացում, տանիքի ամբողջական նորոգում

1.Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ:

2. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն:

3. Նահխագիծը ներկայացնել 5 օրինակից՝ տպագիր և 2 օրինակից՝ էլեկտրոնային կրիչով (PDFֆորմատով)

4. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ:

5. Փորձաքննության եզրակացությունը ներկայացնել 1 օրինակից, տագիր, ՀՀ Կառավարության 06.05.2010թ. հ. 711-Ն որոշմամբ հաստատված «Քաղաքաշինության փաստաթղթերի փորձաքննության կարգի» համաձայն

6. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքի ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ:

7. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

8. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները:

Ժամկետը - Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացուցային օրը ներառյալ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028298
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար

Վ. Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ
ք. Երևան, Թոթովենցի 12/28
«ԿՏԲ-Հայաստանյան Բանկ» ՓԲԸ 15 մ/6
Հ/Հ՝ 16054008264300
ՀՎՀՀ՝ 00857439
Տնօրեն՝

Ն.Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«08» 08 2019 թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/45 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/501														350 000
2	71241200/502														390 000
3	71241200/503														250 000
4	71241200/504														220 000
5	71241200/505														190 000
6	71241200/506														70 000
7	71241200/507														200 000
8	71241200/508														260 000
9	71241200/509														200 000
10	71241200/510														230 000
11	71241200/511														210 000
12	71241200/512														270 000
13	71241200/513														310 000
14	71241200/514														40 000
15	71241200/515														210 000
16	71241200/516														110 000
17	71241200/517														190 000
18	71241200/518														100 000

19	71241200/519														250 000
20	71241200/520														90 000
21	71241200/521														70 000
22	71241200/522														140 000
23	71241200/523														140 000
24	71241200/524														140 000
25	71241200/525														140 000
26	71241200/526														220 000
27	71241200/527														210 000
28	71241200/528														250 000
29	71241200/529														330 000
30	71241200/530														100 000
31	71241200/531														250 000
32	71241200/532														160 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028298
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար

Օհանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ
ք. Երևան, Թոթովենցի 12/28
«ԱՏԲ-Հայաստանյան Բանկ» ՓԲԸ 15 մ/հ
Հ/Հ՝ 16054008264300
ՀՎՀՀ՝ 00857439
Տնօրեն՝

Լ.Գրիգորյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 03 » 08 2019 թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/45 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«08» 08 2019 թ. կնքված
ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/45 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն